Արևիս

Բնակչություն՝ 102

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 125 կմ,
Հեռավորությունը Սիսիան քաղաքից՝ 21 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1950 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ, լեռնային,

Նախին անվանումներն են Արավիս, Արավսա, Արավուս, Արաեսա, Շահարջիկ, Շենիրճիկ, Սաեար-Ալի: ՀՍՍՀ Գեարագույն սովետի 1968թ. հուլիսի 7-ի հրամանագրով վերանվանվել է Արևիս: Հնում եղել է գրչության կենտրոն և ըստ մի հիշատակարանի Գրիգոր Գրիչը 1411թ. այստեղ ընդօրինակել է մի Ավետարան:
1781թ. հարկացուցակի /Քյոթուկին համաձայն Տաթևի վանքին վճարել է 1500 դահեկան պտղի հարկ: Ալիշանը սխալմամբ այս գյուղը նույացնում է Իրիմիս գյուղին: Գյուղից 4-5 կմ հյուսիս-արևմուտք կա ավերակ գյուղատեղի:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Գյուղատնտեսությամբ զբաղվում է 28 գյուղացիական տնտեսություն:
Անասնագլխաքանակը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է.
- խոշոր եղջերավոր անասուններ՝ 79գլուխ,
- մանր եղջերավոր անասուններ՝ 300գլուխ,
- մեղվաընտանիքներ՝ 160:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 5856 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 3138 հա, որից՝
- վարելահող՝ 136 հա, խոտհարք՝ 114 հա, արոտ՝ 1710 հա, այլ հողատեսք՝1178 հա
- բնակավայրերի հողեր՝ 19 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 1757 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 3 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 18 հա,
- հատուկ նշանակության հողեր՝ 1 հա,
- անտառային հողեր՝ 880 հա, որից անտառածածկ՝ 621 հա
- ջրային հողեր՝ 41 հա